


891. 71
U-75

Լ. ՄԻՏՋԵԼ


ԻԼՋՈՎ ԵՍ



ՃԱՆԱԴԱՐԿՈՐԴԵԼՈՒ



ՊԵՏԶՐԱՏ



ԻՆՁՈՎ ԵՍ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼՈՒ

Մի յեզ կար՝ խոշոր, սպիտակ ու գեղեցիկ: Նրա մեջքը լայն էր, պոզերը՝ յերկայն, աչքերը՝ մեծ-մեծ ու սիրուն: Ամառվա մի տաք որ նա դանդաղ քայլերով, կողքից կողք որորվելով ճանապարհ էր գնում:

— Ի՞նչ լավն էմ,— մտածում էր նա,— մեծ էմ և ուժեղ: Ելի ո՞վ կարող է այնքան բեռ տանել, վորքան յես էմ տանում, կամ ինձնից բացի ո՞վ կարող է այնպիսի խոր ափոս քաշել, ինչպիսին յես էմ քաշում: Ի՞նչ կլինե՞ր մարդկանց հալը, յեթե յես չլինե՞յի: Հենց եզ բոպեյին լսեց, վոր մեկը յետևից թռած գալիս է— դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք: Յեկողը մի սպիտակ ու մեծ ձի յեր:


— Բարի որ,— բառաչեց յեզը, դանդաղորեն իր խոշոր ու գեղեցիկ աչքերը վազող ձիուն դարձնելով: — Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ յես այդպես շտապում, քո՛ւրիկ:

Ձին սիրուն բաշը թափ տվավ ու խրխնջաց.

— Շտապում էմ. յես արագ վազելու համար էմ ստեղծված: Գիտես, վոր յես կարող էմ անցնել 10 վերստ այն ժամանակ, յերբ դու հազիվ մեկն ես անցնում: Քեզ նման մեծ ու սպիտակ

82-93
5-75

պ.



խխունջն աշխարհին այլևս պետք չի: Մի նայիր ու տես, թե ի՞նչ արագ էմ սլանում:— Ասաց ձին ու դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք, առաջ արշավեց:

Հենց վոր ձին աչքից հեռացավ, յեզն սկսեց մտածել ձիու ասածների վրա:

— Ի՞նչ ասաց այս ձին. նա ինձ մեծ ու սպիտակ խխունջ անվանեց: Ասաց, վոր մինչև իմ մի վերստ ճանապարհ կտրե՞լն ինքը տասը կանցնի: Ճիշտ վոր՝ նա ինձնից ավելի զարմանալի կենդանի յե:

Իսկ ձին սլանում ու ինքն իրեն մտածում էր.

— Ի՞նչ լավն էմ յես: Ճարպիկ էմ, արագավազ, յեզնից շատ արագավազ: Աշխարհն առանց ինձ ի՞նչ կաներ: Մեկ էլ հանկարծ նա իր գլխի վերևը մի տարրերինակ սոգոց լսեց. յետ նայեց: Չայնը յերկաթալարից էր գալիս, վոր այդ ժամանակ դողում ու ձայն էր հանում:

Շատ շանցած, ձին արագ թավալվող անիվների ձայն լսեց.— դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ: Ձին յետ նայեց ու վախեցավ: Ի՞նչ տեսնի, վոր լավ լինի:

1002
7294
Q





Տրամվայն եր սլանում: Նրա գազաթը յեր-
գող յերկաթալարին եր քսվում: Ձին սաստիկ վա-
խեցավ, աչքերը չովեցին, բաշը բիզ կանգնեց:

—Ո՛վ ե շարժում ես մեքենան. —գարմացավ
նա:

—Ե՛յ, գռեհիկ գեղական, — ձայն տվավ տրամ-
վայը, վորին շարժողն ելեկտրականությունն եր: —
Իսկ յես կարծում եյի, թե այս չորքոտանի հնու-
թյուններն աշխարհի յերեսից վաղուց են չքացել:
Հավատա՛, դուք վոչ վոքի յել պետք չեք: Բո՛կ ես
որում անցածը յես մի ժամում կանցնեմ: Վորտեղ
դու մի մարդ տանես, յես առնվազն տասը կտա-
նեմ: Ո՛վ շտապում ե, թող ինձնով ճանապարհ գնա:
Մի լսվ նայիր ինձ:

Ասաց տրամվայն ու առաջ սլացավ, իր յետե-
վում միայն յերգող յերկաթալարը թողնելով: Մեր
խեղճ ձին սկսեց մտածել իր լսածների վրա:

—Նա ինձ գռեհիկ գեղական անվանեց: Նա
ասաց, վոր իմ կես որում անցած ճանապարհն ին-
քը մի ժամում կանցնի: Ի՛նչ խոսք, վոր այս արագ-



ընթաց կառքն ավելի յե արժանի ուշադրության,
քան յես:

Տրամվայն առաջ սլացավ, որորվելով ու մտածելով.


—Յես ինձ շատ եմ հավանում: Իմ ուժն են կայ-
ծակից ե, վոր փայլատակում ե յերկնքում: Յես
արագասլաց եմ. ավելի արագ, քան յեզր, քան ձին:
Առանց ինձ աշխարհի բանը բուրդ կլիներ:


Մեկ ել սաստիկ աղմուկ լսեց: Կարծես մի ամե-
հի հրեշ հագում եր՝ կյանքից բաժանվելիս:

—Ֆու, ֆու-ֆու-ֆու:

Սարսափահար տրամվայն ինչ տեսնի, վոր լավ
լինի, —կանաչ դաշտով մի անաղին յերկաթե հրեշ ե
մոտենում —ամբողջը ծխի սև բուլաներով պատած:
Նրա քթածակերից երակե կայծեր եյին դուրս թրո-
շում:

—Բարե, ծնւյլ աղբեր, — աւելեց յերկաթուղու
գնացքը՝ հենց վոր տրամվային մոտեցավ: — Շմտ ես
հուպներ: Զարմանալու բան չկա: Դու յերբեք ինձ-
պես արագ չես կարող շարժվել: Դրա պատճառն
են ե, վոր ինձ շարժողն ամենակարող գոլորշու





ուժն է։ Մի լավ նայիր իմ ահագին կաթսաներին,
 իմ վառարանների կրակին։ Բո կես որվա անցած
 ճանապարհը յես մի ժամում կանցնեմ։ Այն ժա-
 մանակ, յերբ դու մի մարդ ես տանում, ինձ հա-
 մար քսանն ել քիչ է։ Ով շտապում է, թող ինձնով
 ճանապարհորդի։ Դե, միաս բարե. շաապիր, շտա-
 պիր, դանդաղաշնորժ տրամվայ։


Յեվ—Ֆո՛ւհ-Ֆո՛ւհ, գնացքն անցավ, յետևից սև
 ծխի հոսանք թողնելով։ Իսկ խեղճ տրամվայն սկսեց
 մտածել հենց նոր լսածների մասին։

—Նա ինձ ծուլլ աղբեր անվանեց, ասաց, վոր
 իմ կես որում անցած ճանապարհն ինքը մի ժա-
 մում կանցնի։ Ի՞նչ խոսք, վոր ես անճոռնի գնացքն
 ինձնից ուժեղ ե։

Գնացքը մոտեցավ կայարանին, վոր հեռու չեր
 նավային մեծ դոկերից։ Յեվ մինչև վոր մարդիկ
 վագոնները կրեռնեյին, նա մտածում եր.

—Յես ինձնից շատ գոհ եմ. ավելի արագ եմ
 գնում, քան յեզը, ձին, տրամվայը։ Աշխարհն ի՞նչ
 կաներ առանց ինձ։ Յես ում ասես—ծառայում
 եմ, ուր ասես—կարող եմ գնալ։





ուժն եւ Մի լավ նայիր իմ ահագին կաթսաներին,
 իմ վառարանների կրակին։ Ի՞նչ կես որվա անցած
 ճանապարհը յես մի ժամում կանցնեմ։ Այն ժա-
 մանակ, յերբ դու մի մարդ ես տանում, ինձ հա-
 մար քսանն ել քիչ եւ։ Ով շտապում ե, թող ինձնով
 ճանապարհորդի։ Դե, մնաս բարեւ շաապիր, շտա-
 պիր, դանդաղաշնրժ տրամվայ։

Յեվ—Փո՛ւհ-Փո՛ւհ, գնացքն անցավ, յետևից սև
 ծխի հոսանք թողնելով։ Իսկ խեղճ տրամվայն սկսեց
 մտածել հենց նոր լսածների մասին։

—Նա ինձ ծուլլ աղբեր անվանեց, ասաց, վոր
 իմ կես որում անցած ճանապարհն ինքը մի ժա-
 մում կանցնի։ Ի՞նչ խոսք, վոր ես անճոռնի գնացքն
 ինձնից ուժեղ ե։

Գնացքը մոտեցավ կայարանին, վոր հեռու չեր
 նավային մեծ դոկերից։ Յեվ մինչև վոր մարդիկ
 վագոնները կբեռնեյին, նա մտածում եր.

—Յես ինձնից շատ գոհ եմ. ավելի արագ եմ
 գնում, քան յեզը, ձին, տրամվայը։ Աշխարհն ի՞նչ
 կաներ առանց ինձ։ Յես ում ասես—ծառայում
 եմ, ուր ասես—կարող եմ գնալ։



Հենց եղ ժամանակ նրան ընդհատեց նավահան -
զըստում բարձած շոգենավի ուժգին ձայնը.—

—Տո՛ւ-տո՛ւ-տո՛ւ...


Եղ ձայնն ասում եր.

—Այ դո՛ւ, ծիծաղելի՛ հողեղեն թամբալ: Եղ դո՛ւ
յես ասում, թե կարող ես ամեն տեղ գնալ: Դե
ասա՛, կարող ես ջրի յերեսով սլանալ: Ի՛նչպես չե:
Եղ շնորհքը միայն ինձ ե տված: Յես եմ, վոր ապ-
րանք եմ փոխադրում ովկիանոսներով: Նույն իսկ
են տեղերում, ուր դո՛ւ յե՛լ կարող ես գնալ, մար-
դիկ ինձ ավելի յեն հավատում, քան քեզ: Սրան
ի՛նչ կասես: Գոնե մի անգամ մտածե՛լ ես, թե մար-
դիկ ինչո՛ւ գետերի շոգենավերից ավելի յեն ոգ-
տրվում, քան քեզնից: Ես բոլորը միայն նրա համար,
վոր շատ լավ են հասկանում, թե ինձնից ոգտվելն
ավելի հաշիվ ե: Դու քո արապության համար
ածուխ շատ ավելի յես բանեցնում. շատ ես աղ-
մրկում. այ դո՛ւ, ցամաքային ծույլ:

Այս յերկար ճառից հետո հին շոգենավի ձայնը
նույն իսկ խանձվեց և ստիպված յեղավ իր կոկոր-
դը մաքրել բարձրաձայն տո՛ւ-տո՛ւ-ով ու չքացավ
խավարում:

—Պետք ե խոստովանել, վոր շոգենավը ճիշտ
եր ասում,—մտածում եր յերկաթուղին:—Բայց են
ել անկասկած ե, վոր ցամաքի վրա յես ծառայում
եմ ամենին և ուր ասես՝ կարող եմ գնալ:

Հանկարծ յերկաթուղու ես ճառն ընդհատեց
մի բոլորովին անսպասելի ձայն: Այդ նման եր թե
պողպատի բրբջոցի, թե պղնձի զկրտոցի:



Գնացքն իրեն անհարմար զգաց: Նրան թվաց,
թե մեկն իրեն ծաղրում ե: Հաղթական կերպով
շրջեց իր լապտերը: Լապտերը լուսավորեց փոքրիկ
ու ծիծաղելի ավտոմոբիլը, վոր համ ծիծաղում, համ
ել սաստիկ դողդողում ու գլորվում եր. զ-զ-զ-զ... ..

—Ախ դու, պստիկ ու թույլ գետնի կոպալ...—
վորոտաց գնացքը:—Ինչի՛ յես պետք, ե...

Ավտոմոբիլը սաստիկ դողդողաց, իր լապտե-
րի ճառագայթներով լուսավորվեց ու ասաց.

—Ձարմանում եմ, վոր ասում ես, թե յերկրի
յերեսին կարող ես ամեն տեղ գնալ: Ասա՛—քո շո-
գիով, կաթսայով ու վառարանով կարող ես հողի
վրա թեկուզ մի քայլ անել: Դու պինդ կպած ես
քո պողպատե ուելսերին և, յեթե նրանցում մի բան
կարգին չլինի, իսկույն շուռ կգաս, առուն կընկնես
կամ մի այլ հիմարություն կանես. միայն յես եմ,
յես, վոր կարող եմ ամեն տեսակ դժվարություն հաղ-
թել ու անցնել: Կայծերն ու գազուլինն իմ հրամա-
նին պատրաստ են: Իսկ դու, մանուկ, դու անոգնա-
կան, ուելսերից կպած գնացք, մի տես, թե ի՛նչ-
պես կբարձրանամ այս բլուրը: Գո՛նդ, գո՛նդ...



Ավտոմոբիլն իսկույն բլուրը բարձրացավ:

Գնացքն անմիջապես դարձրեց իր լապտերն ու լուսավորեց փայլուն ռելսերը: Նա մտածում էր իր լսածների մասին.

—Նա ինձ անվանեց ռելսերին կպած: Միանգամայն ճիշտ է: Այս գետնի կոպալն առանց ռելսերի ինչպես ե գլորվում: Չլինի՝ թե մարդիկ նրանով ավելի զարմանան, քան ինձնով:


Այդ ժամանակ ավտոմոբիլն որորվելով գնաց անհարթ ճանապարհով: Նա ուրախ հեռում ու մտածում էր.

—Յես անշափ գոհ եմ ինձնից: Ի՜նչ ճարպիկ կերպով բարձրացա ես բլուրը: Իսկապես վոր մարդիկ ինձնով շատ պիտի զարմանան:

Հենց եղ ժամանակ մի ձայն լսեց, վորից նրա մարմինը սարսուռաց.

—Դ՛ր-դ՛ր-դ՛ր-դ՛ր-դ՛ր...

Չայնը կարծես ուղղակի յերկնքից էր գալիս: Ավտոմոբիլն իր բոլոր ուժը հավաքեց ու լուսարձակները դեպի վեր դարձրեց: Նա մեկեն քար կըտրեց: Նրա գլխի վերեր, բարձր, շատ բարձր սավառնում էր հսկայական սավառնակը: Նա սավառնում, իջնում, բարձրանում էր: Նա անվրդով, հզոր և ուժեղ էր յերևում: Ահագին մարմինը իջնում, հա՛



իջնում էր: Մեկ ել սարսափելի դառանչի ու տրգ-գոցի միջից հետևյալ խոսքերը լսվեցին.

—Տը՛գ-տը՛գ-տը՛գ-տը՛գ... Էյ դու փոքրիկ, հողի յերեսին սողացող ճիճվիկ, կարծում ես՝ շատ զարմանալի բան ես: Յերը յերկնքով թռչելիս ձեզ եմ նայում, բոլորդ ել խղճալի յեք յերևում: Յեզը ձիու առաջ ե փաս, ձին առաջնությունը շոգենավին ե գիջում, բոլորը—տրամվայ, յերկաթուղի և ավտոմոբիլ՝ ինձ են գիջում, վորովհետև շատ շտապողների համար յես եմ, վոր կամ: Դ՛ր-դ՛ր-դ՛ր-դ՛ր-դ՛ր:

Յեվ ահագին սավառնակն անիմները շարժեց ու բարձրացավ՝ հսկայական թռչունի նման: Իսկ ավտոմոբիլը նրան էր նայում: Բերանը չեր գորում, վոր բան ասի:

Դեպի վեր-վեր էր թռչում սավառնակը... բարձր, բարձր, շատ բարձր, մինչև իսպառ չքացավ անհունության մեջ:

Փոխադրեց Հ. ՍԱՌԻԿՅԱՆ



«Ազգային գրադարան»



NL0376938

824

ԳԻՆՔ՝ 30 ԿՈՊ.



ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆՈՒՄ ՀՍԽՀ ԼԺԿ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՎԻՑԻԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ № 25

Պետերատ № 729

Գրառեղվար № 631 բ.

տիրած 5000:

1928 թ

Վերագրատուն Հայկական գրադար 2-րդ ստ. պատ № 3342

ՏԵՐԵՎԱՆ